Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
օգոստոսի 13-ի N 995 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

NN ը/կ	Միջոցառումը	Ժամկետը	Պատասխանատուն	Ծանոթագրություն
1	2	3	4	5
1.	ՀՀ վարչապետի «Ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու մասին» որոշման նախագիծը ՀՀ վարչապետի քննարկմանը ներկայացնելը	2009 թ. սեպտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	
2.	«Հայավտոճանի տնօրինություն» ՊՈԱԿ-ի կազմում ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի քարտուղարության ստեղծում	2009 թ. հոկտեմբերի առաջին տասնօրյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	
3.	Ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի քարտուղարության ստեղծման աջակցմանն ուղղված Համաշխարհային բանկի հետ 50,000 ԱՄՆ գումարով TF094897	Համաշխարհային բանկից դրամաշնորհի	ՀՀ ֆինանսների նախարարություն	

1	2	3	4	5
	դրամաշնորհի համաձայնագրի ստորագրում	համաձայնագիրն ստանալուց տաս օրվա ընթացքում		
4.	Հայաստանի Հանրապետության և Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարության հինգ տարվա գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը 2010 թ. ՀՀ պետական բյուջեում ներառում	բյուջետային գործընթացի համաձայն	ՀՀ ֆինանսների նախարարություն	
5.	ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 62-րդ նստաշրջանի N 62/244 որոշման համաձայն 2009 թ. նոյեմբերի 19-20-ը Մոսկվա քաղաքում կայանալիք ճանապարհային երթևեկության անվտանգության հարցերով առաջին նախարարական կոնֆերանսի նախապատրաստական միջոցառումների շրջանակում «Դարձնենք ճանապարհները անվտանգ» միջոցառումների շարքի իրականացում	2009 թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում	ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ ճանապարհային ոստիկանություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն Երևանի քաղաքապետ (համաձայնությամբ)	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի հետ համատեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ